ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

572

15 դեկտեմբերի 2025 թվականի N - Ա

«ԳՈՐԱՅՔԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ՝ ՏՆՕՐԵՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022թ. փետրվարի 3-ի «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի օրինակելի կարգը և նրանց հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 129-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածի 17-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի աշխատակազմի 2025 թվականի դեկտեմբերի 10-ի N 02/09.18/40264-2025 և ՀՀ առողջապահության նախարարության 2025 թվականի դեկտեմբերի 9-ի N ՎԳ/05/40528-2025 գրությունները՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Հաստատել՝ «Գորայքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի՝ տնօրենի ընտրության մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:
2. ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Recoverable Signature

Signed by: GHUKASYAN ROBERT 3712800290

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025թ. դեկտեմբերի 15
ք.Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
2025 թվականի դեկտեմբերի 15-ի
N 572-Ա որոշման

ԿԱՋՄ

«Գորայքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի՝ տնօրենի ընտրության մրցութային հանձնաժողովի.

1. Նարե Ղազարյան – Սյունիքի մարզպետի տեղակալ (հանձնաժողովի նախագահ)

2. Գայանե Սարգսյան - Մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության փաստաթղթաշրջանառության բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղար),

3. Արմեն Թադևոսյան – Մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ,

4. Մարգարիտա Մարգարյան - Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի սոցիալական հարցերի վարչության գլխավոր մասնագետ (համաձայնությամբ),

5. Արսեն Բաբայան - Առողջապահության նախարարության «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն (համաձայնությամբ),

6. Լենա Մալինցյան - Առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «Սյունիք» մասնաճյուղի տնօրենի պարտականությունները կատարող (համաձայնությամբ),

7. Արտակ Գրիգորյան - Հայկական հոգեբուժական ասոցիացիայի անդամ (համաձայնությամբ:

Recoverable Signature

Ստորագրող
ԱՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ
6012780133

Signed by: AVAGYAN ARMINE 6012780133

ՀՀ Սյունիքի մարզպետի
աշխատակազմի գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող

Ա. Ավագյան